

«ՖԼԵՇ»

Հավելված N 1
« ՀԱՓԿ-ԳՀԱՊՁԲ-23/01 »* ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Գնանշման հարցմանը մասնակցելու

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել «Հումանիտար ականագերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՀԱՓԿ-ԳՀԱՊՁԲ-23/01» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1 չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:
«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 01808789
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ flashltdtender@gmail.com
- գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30
- հեռախոսահամարն է՝ +37410534233

Սույնով «ՖԼԵՇ» ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ՀԱՓԿ-ԳՀԱՊՁԲ-23/01» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

2) «ՀԱՓԿ-ԳՀԱՊՁԲ-23/01» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիստուն տոկոս «ՖԼԵՇ» ՍՊԸ -ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև ներկայացնում է «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ <https://www.e-register.am/am/companies/1411892/declaration/981caa84-c8ce-415d-9689-3fe905d5f618>
Կից ներկայացվում է «ՖԼԵՇ» ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 1.1-ի:

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Սանասար Բեգլարյան

